



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

21.07.2021թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/47

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով «ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար համակարգչային և տեսաձայնագրող տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ռեկոն» ՍՊԸ-ի կողմից 28.06.2021թ. ներկայացված (01.07.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/47 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

#### **1. «Ռեկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ռեկոն» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 28.06.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«22.06.2021թ-ին ԵՊՀ Հիմնադրամ-ի կողմից ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138 ծածկագրով գնանշման հարցման վերաբերյալ հրապարակված հայտարարությամբ GNSS ընդունիչ-Geo Tak\*\*-ի ձեռքբերումը:

*Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.*

Վերոնշյալ հարցման հայտարարության տեխնիկական բնութագրով պահանջվող պարամետրերի մասնագիտական ուսումնասիրությունը մեզ թույլ է տվել միանշանակ

եզրակացնել, որ այն կազմված է կոնկրետ մեկ արտադրողի կոնկրետ գործիքի պարամետրերին համապատասխան և ոչ միայն խոչընդոտներ է ստեղծում մրցակցության համար, այլև բացառում է մեկ այլ արտադրողի կողմից առաջարկի ներկայացման հնարավորությունը: Մասնավորապես՝ տեխնիկական բնութագրում առկա է այսպիսի պահանջ՝ «Տվյալներ ֆորմատներ՝ RTCM 2.x, RTCM 3.x, CMR input / output HCN, HRC, RINEX 2.11, 3.02 NMEA 0183 output կամ ավել»: Նշեմ, որ նշված HCN HRC ֆայլի ֆորմատները չինական CHC ընկերության կողմից արտադրված գործիքների ֆորմատներ են և, բացի այդ ընկերության սարքավորումներից, ոչ մի այլ արտադրողի սարքավորումներ այդ ֆորմատով չեն կարողանում աշխատել: Վերոնշյալը զրկում է մեզ մեր ընկերության կողմից ներկայացվող Trimble ամերիկյան ընկերության տեղորոշման համակարգերի մեծ շարքից որևէ մեկը ներկայացնելու հնարավորությունից, ինչը իր հերթին խախտում է գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1 և 2 կետերը՝

«Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

Բացի այս՝ օրենքը ակնառու խախտող պահանջը, հիմնական մնացած պարամետրերը ևս վերցված են վերոնշյալ արտադրողի կոնկրետ մոդելի տեխնիկական բնութագրերից որոշ պարամետրերի ձևական փոփոխությամբ, սակայն միևնույն ժամանակ մի շարք պահանջների կոնկրետ՝ առանց միջակայքերի սահմանմամբ, որոնք ևս, ըստ մեր մասնագիտական կարծիքի, առաջացնում են մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ, սակայն չեն կարող էական դեր ունենալ գնման կարիքի բավարարման վրա:

Օրինակ՝

ընդունիչի համար սահմանված է ներքին հիշողություն 8GB, որին չեն համապատասխանում աշխարհում առաջատար բրենդների լավագույն ընդունիչները, այդ թվում մեր կողմից ներկայացվող Trimble ընկերության վերջին մոդելի R12i GNSS ընդունիչը, որը համարվում է լավագույններից մեկը այս պահին:

ընդունիչի ալիքների քանակը նշված է ոչ պակաս քան 624-ից (նշեմ, որ վերոնշյալ CHCNAV - i90 մոդելի ընդունիչի ալիքների քանակը հենց 624 է) և ոչ 400-ից 650:

Բողոքի պահանջը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7- րդ մասին 1-ին ենթակետով խնդրում եմ.

Պարտավորեցնել ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138 ծածկագրով գնման ընթացակարգը»:

Ընկերությունը բողոքի շրջանակներում Պատվիրատուի կողմից ներկայացված դիրքորոշման վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ստացել եմ Ձեր կողմից ուղարկված, ԵՊՀ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը մեր կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ, որի հետ կապված ցանկանում եմ մեր ընկերության դիրքորոշումը և հիմնավորումը՝ կապված ԵՊՀ-ի կողմից ներկայացված և դրանում ներկայացված հիմնավորումների հետ:

Այսպես, վերոնշյալ գրության մեջ անդրադարձ է կատարվել մեր կողմից ներկայացված այն հիմնավորմանը, որ, մեջբերում եմ՝ «հրավերում տեղ գտած տեխ. բնութագիրը կազմված է կոնկրետ մեկ արտադրողի կոնկրետ գործիքի պարամետրերին համապատասխան և ոչ միայն խոչընդոտներ է ստեղծում մրցակցության համար, այլև բացառում է մեկ այլ արտադրողի ներկայացման հնարավորությունը: Մասնավորապես, վերոնշյալ գրությամբ նշվել է որ, մեջբերում եմ՝ «Հարկ ենք համարում նշել, որ Հրավերի տեխնիկական բնութագրերում ընդունիչի ֆորմատներին ներկայացվող պահանջները ձևակերպված է հետևյալ կերպ՝ «Տվյալներ ֆորմատներ՝ RTCM2x, RTCM3x, CMR input /output HCN, HRC, RINEX2.11, 3.02 NMEA 0183 output կամ ավել»։ Այսինքն, տվյալ դեպքում նշվել է ոչ թե միայն HCN և HRC ֆորմատները, այլ ևս մի քանի ֆորմատներ կամ ավելի/օրինակ RINEX 2.11, 3.02 NMEA 0183 output կամ ավել/»: ԵՊՀ, հենց գրությամբ ընդունում է, որ տեխբնութագրում նշվել է ոչ թե միայն CHC ընկերության ունիկալ HCN և HRC տվյալների ֆորմատները, այլև միջազգային պրակտիկայում ընդունված այլ ունիվերսալ տվյալների ֆորմատները: Մենք ևս չենք այս մեկնաբանությունը, ընդհակառակը հենց դա էլ հիմնավորում է մեր դիրքորոշումը, քանի որ տեխ. բնութագրում չի նշված «կամ HCN, HRC կամ RINEX2.11, կամ MMEA 0183 այլ նշված «output HCN, HRC, RINEX 2.11, 3.02 0183 output կամ ավել» այսինքն ներկայացված երեքը նշված են որպես պարտադիր և պոտենցիալ մասնակիցը հնարավորություն ունի ներկայացնելու գործիք, որը բացի այդ երեք տվյալների ֆորմատներից ապահովում է նաև այլ տվյալների ֆորմատներ: Ասվածը ավելին քան հիմնավորում է, որ տեխնիկական բնութագիրը կազմված է այնպես, որ բացի

CHC ընկերության գործիքներից այլ գործիք հնարավոր չէր առաջարկել այս մրցույթում, որի պատճառով էլ մենք չենք կարողացել հայտ ներկայացնել այս ընթացակարգին:

Որպես ոլորտում երկարամյա փորձ ունեցող ընկերություն, ցանկանում ենք ևս մեկ անգամ նշել, որ վերոնշյալ տվյալների ֆորմատները հանդիսանում են միայն CHC ընկերության գործիքների կողմից օգտագործվող տվյալների ֆորմատներ և որպես մեր ասվածի հիմնավորում սույն գրությանը կից ներկայացնում ենք ոլորտի 6 ընկերության նմանատիպ գործիքների վերաբերյալ տեխնիկական բնութագրեր, որոնց data formats, Data putput, communication pratacols բաժիններից ոչ մեկի մեջ չկա նշում խնդրահարույց HCN, HRC տվյալների ֆորմատների մասին: Ասվածը չի նշանակում, որ միայն այս 6 ընկերությունների արտադրանքում չկան այդ տվյալների ֆորմատները, բոլոր արտադրողների մոտ դրանք բացակայում են, ուղղակի մեր կողմից ներկայացվել են մեր շուկային ծանոթ և ոլորտի հիմնական առաջատար ընկերությունները, որոնց, բաժին է ընկնում այս շուկային 70 և ավելի տոկոսը:

Միաժամանակ հայտնում եմ նաև, որ մեր ընկերությունը ունի ԲՈՒՀ-երի հետ համագործակցության երկարամյա փորձ և մենք բարձր ենք գնահատում կրթական հաստատությունների դերը և ամենևին նպատակ չունենք խաթարել ԵՊՀ-ի բնական գործունեությունը և խոչընդոտ հանդիսանալ իրենց կողմից իրականացվող ծրագրերին, այդ իսկ պատճառով խնդրում եմ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որ բողոքի քննության արդյունքում անդրադառնալ և չկայացած համարելու որոշում կայացնել միայն մեր կողմից վիճարկվող 39-րդ չափաբաժնի մասով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.07.2021թ. ժամը 09:40-ին և 21.07.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

## **2. «ԵՊՀ» հիմնադրամի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.**

«ԵՊՀ» հիմնադրամը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 06.07.2021թ. 01/782-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից համակարգչային և տեսաձայնագրող տեխնիկայի ձեռքբերման նպատակով 22/06/2021թ. գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138»

ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը/այսուհետ՝ Հրավեր/, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել 14 մասնակիցներ:

ԳԲԲԱ-ՆԳ-2021/47, 28.06.2021թ. բողոքը ներկայացրած «Ռեկոն» ՍՊԸ-ն չի մասնակցել վերոնշյալ գնման ընթացակարգին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ Օրենք/ 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 25-րդ ենթակետի, ինչպես նաև Հրավերի 3.5 կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ առանց նշելու անունը-ազգանունը:

Վերոնշյալ նորմերի համաձայն՝ «Ռեկոն» ՍՊԸ-ն կարող էր հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից իր հիմնավորումները ներկայացնել մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը, սակայն վերջինս նշված ժամկետում չի ներկայացրել իր հիմնավորումները, իսկ բողոքը ներկայացրել է Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո:

Այնուամենայնիվ ուսումնասիրելով «Ռեկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, կարծում ենք որ այն անհիմն է: Մասնավորապես բողոքում բերված փաստարկների համաձայն՝ Հրավերի 39-րդ չափաբաժնով ներկայացված ընդունիչի տեխնիկական բնութագրերում նշված

1. HCN և HRC ֆայլի ֆորմատները չինական CHC ընկերության կողմից արտադրված գործիքների ֆորմատներ են:

Հարկ ենք համարում նշել, որ Հրավերի տեխնիկական բնութագրերում ընդունիչի ֆորմատներին ներկայացվող պահանջները ձևակերպված է հետևյալ կերպ՝ «Տվյալներ

Ֆորմատներ՝ RTCM 2.x, RTCM 3.x, CMR input / output HCN, HRC, RINEX 2.11, 3.02 NMEA 0183 output կամ ավել».

Այսինքն տվյալ դեպքում նշվել է ոչ թե միայն HCN և HRC ֆորմատները, այլ ևս մի քանի ֆորմատներ կամ ավելի/օրինակ RINEX 2.11, 3.02 NMEA 0183 output կամ ավել/

2. ընդունիչի համար սահմանված է ներքին հիշողություն 8GB:

Հայտնում ենք, որ Հրավերի տեխնիկական բնութագրերում ընդունիչի ներքին հիշողությանը ներկայացվող պահանջները ձևակերպված է հետևյալ կերպ «Ներքին հիշողություն՝ ոչ պակաս քան 8GB»:

Այսինքն տվյալ դեպքում ընդունիչի ներքին հիշողությունը կարող է լինել 8GB և ավելի:

3. ընդունիչի ալիքների քանակը նշված է ոչ պակաս քան 624-ից (նշեմ, որ վերոնշյալ CHCNAV · i90 մոդելի ընդունիչի ալիքների քանակը հենց 624 է) և ոչ 400-ից 650:

Տվյալ դեպքում առավել քան ակնառու է, որ Հրավերի տեխնիկական բնութագրերում ընդունիչի ալիքների քանակը նշված է ոչ թե կոնկրետ 624, այլ ոչ պակաս 624, ինչը ենթադրում է, որ ալիքները կարող են ավելին լինեն 624-ից:

Միաժամանակ տարակուսելի է, թե ինչու ընդունիչի ալիքների քանակը պետք է նշված լինեն 400-ից 650 /երևի որպեսզի համապատասխաներ «Ռեկոն» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող մոդելի պահանջներին/:

Ամփոփելով վերոգրյալը հայտնում ենք, որ Հրավերի 39-րդ չափաբաժնով չեն սահմանվել ընդունիչի որևէ կոնկրետ մոդելի պարամետրեր, քանի որ կոնկրետ մոդելի դեպքում Հրավերի տեխնիկական բնութագրերում կնշվեն կոնկրետ պարամետրեր, օրինակ՝ ներքին հիշողությունը՝ կսահմանվեր 8GB, այլ ոչ թե ոչ պակաս քան 8GB, ալիքների քանակը՝ 624, այլ ոչ թե ոչ պակաս 624 և այլն/:

Տպավորություն է ստեղծվում առ այն, որ, քանի որ Հրավերի տեխնիկական բնութագրերով չեն սահմանվել «Ռեկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվող Trimble ընկերության վերջին մոդելի R12i GNSS ընդունիչին ներկայացվող պարամետրերը /պահանջները/, ապա սահմանված պարամետրերը /պահանջները/ խտրական են և սահմանվել են ինչ որ կոնկրետ մոդելի համար:

Միաժամանակ հայտնում ենք նաև, որ «Ռեկոն» ՍՊԸ-ն բողոքարկել է միայն Հրավերի 39-րդ չափաբաժնի մասով, սակայն գնումների հետ կապված բողոքներ քննող անձից խնդրում է պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու ամբողջ ընթացակարգը, որով, ի դեպ, սարքեր են ձեռք բերվում «Երևանի պետական

համալսարան» հիմնադրամում (ԵՊՀ) իրականացվող Եվրոպական երեք համատեղ նախագծերի («EU Erasmus+ in 2019-2022, Project# 597912-EPP-1-2018-1-MD-EPPKA2-CBHE-SP» (Minerva), Project# 617695-EPP-1-2020-1-ES-EPPKA2-CBHE-JP (GEOTAK), «Promoting Heritage- and Culture-based Experiential Tourism in the Black Sea Basin» (PRO EXTOUR)) և ԵՊՀ բազմաթիվ ստորաբաժանումների համար, որոնք ունեն սարքավորումներ ձեռք բերելու իրենց նախապես հաստատված աշխատանքային հստակ գրաֆիկները:

Հարգելի պարոն Գ. Ներսիսյան, ամփոփելով վերը շարադրվածը, խնդրում ենք անհիմն ճանաչել «Ռեկոն» ՍՊԸ բողոքը և համաձայն Օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի հանել «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138» ծածկագրով գնման ընթացակարգի կասեցումը, քանի որ առկա են ռեալ հանրային շահեր՝ Եվրոմիության 3 համատեղ նախագծերի պատշաճ և ըստ ժամանակացույցի պահանջների իրականացում և նրանցում ընդգրկված հայկական գիտական խմբերի ու ԵՊՀ համբավը բարձր պահելու անհրաժեշտություն»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.07.2021թ. ժամը 09:40-ին և 21.07.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

### **3. ԳԲԲԱ-ՆԳ-2021/47 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ԳԲԲԱ-ՆԳ-2021/47 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար համակարգչային և տեսաձայնագրող տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. «Ռեկոն» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 39-րդ չափաբաժնով սահմանված գնման ենթակա ապրանքի՝ «GNSS ընդունիչ - Geo Tak», տեխնիկական բնութագրի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու իրավաչափությունը:

3. Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 39-րդ չափաբաժնով սահմանվել է գնման ենթակա ապրանքի՝ «GNSS ընդունիչ - Geo Tak» տեխնիկական բնութագիրը (հետայսու՝ Տեխնիկական բնութագիր):

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ռեկոն» ՍՊԸ-ի 28.06.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «ԵՊՀ» հիմնադրամի 06.07.2021թ. թիվ 01/782-21 գրությամբ ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, Ընթացակարգի հրավերը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.



2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառույթային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպես՝ «ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար համակարգչային և տեսաձայնագրող տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 39-րդ չափաբաժնով սահմանված գնման ենթակա ապրանքի՝ «GNSS ընդունիչ - Geo Tak»-ի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Զ/Հ	անվանումը	Տեխնիկական բնութագիր
39	<b>GNSS</b> <b>ընդունիչ</b> - <b>Geo Tak***</b>	Տիպ՝ RTK GNSS ընդունիչ կառավարման վահանակով <b>Ալիքների քանակը՝ 624 կամ ավել</b> GPS- L1, L2, L5 GLONASS - L1, L2 BeiDou - B1, B2, B3 Galileo – E1, E5a, E5b SBAS – L1 QZSS - L1, L2, L5 Կամ ավել <b>Ներքին հիշողություն՝ ոչ պակաս քան 8GB</b> Չափումների ճշտությունները Ներկա ժամանակում կինեմատիկ (RTK) չափումներ՝

	<p>Հորիզոնական - 8 մմ + 1ppm կամ ավելի ճշգրիտ,  Ուղղահայաց - 15 մմ + 1 ppm կամ ավելի ճշգրիտ,  Չափումների հուսալիությունը՝ 99.9 % կամ ավել,  Հետմշակում կինեմատիկ ռեժիմում</p> <p>Հորիզոնական - 3 մմ + 1ppm կամ ավելի ճշգրիտ,  Ուղղահայաց - 5 մմ + 1 ppm կամ ավելի ճշգրիտ,  Հետմշակում ստատիկ ռեժիմում</p> <p>Հորիզոնական - 2,5 մմ + 0,5 ppm կամ ավելի ճշգրիտ,  Ուղղահայաց - 5 մմ + 0,5 ppm կամ ավելի ճշգրիտ,</p> <p>Անկյան տակ չափումներ կատարելու հնարավորություն, IMU համակարգի առկայություն,  RTK ռեժիմում թեքության կոմպենսատորի ճշտությունը՝ 10 մմ +0.7 մմ / ° կամ ավելի ճշգրիտ,  <b>Տվյալներ ֆորմատներ՝ RTCM 2.x, RTCM 3.x, CMR input / output HCN, HRC, RINEX 2.11, 3.02  NMEA 0183 output կամ ավել,</b></p> <p>Փոշու և խոնավության դեմ պաշտպանվածությունը՝ ոչ պակաս IP67- ից,  Ինտեգրված ռեդիոնոդեմի առկայություն (UHFradio), տիրույթ՝ 430 - 470 MHz կամ ավել,  Աշխատանքային ջերմաստիճանային տիրույթ՝ -40 °C – ից մինչև +65 °C կամ ավել,  Մնուցումը՝ Li-ion 7,4 Վ, 6.8 Ա/ժ կամ ավել, արտաքին սնուցման աղբյուրի միացման  հնարավորություն,</p> <p><b>Կառավարման վահանակ</b></p> <p>Օպերացիոն համակարգ՝ Android TM 7.1 կամ ավելի բարձր,  Պրոցեսոր՝ Octa-core 1.4 GHz կամ ավելի բարձր,  Օպերատիվ հիշողություն՝ ոչ պակաս 2 Գբ-ից ,  Ներքին հիշողություն՝ ոչ պակաս 16 Գբ-ից ,  Հիշողության քարտի (micro SD) միացման հնարավորություն առավելագույնը 128Գբ ,  Էկրանի չափսը՝ ոչ պակաս 5.5 դույմ, IPS սենսորային էկրան.  Էկրանի կետայնությունը՝ ոչ պակաս քան 1280x720,  Տեսախցիկի առկայություն՝ ոչ պակաս 8 մեգապիկսելից,  Լույսի (вспышка) առկայություն,  Փոշու և խոնավության դեմ պաշտպանվածությունը՝ ոչ պակաս IP67- ից  Աշխատանքային ջերմաստիճանային տիրույթ՝ -30 °C – ից մինչև +60 °C կամ ավել,  Wi-Fi , Bluetooth, 4G modem մոդուլների առկայություն  Մնուցումը՝ Li-ion 8 Ա/ժ կամ ավել:</p> <p>Սարքը պետք է համարված լինի աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր համարիչ սարքավորումներով. տելեկոպիկ ձողով, ամրակներով, լիցքավորման սարքով, տեղափոխման համար նախատեսված ճամպրուկով, պետք է տրամադրվի նաև ծրագրային ապահովում արդեն ակտիվ (առանց հավելավճարների) հանութագրման, նշահարման, ճանապարհաշինարարական և այլ հաշվարկային ծրագրերով: Մատակարարը պետք է տրամադրի 2 տարվա երաշխիք և ետերաշխիքային սպասարկում</p>
--	--

«Ռեկոն» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 39-րդ չափաբաժնով սահմանված գնման ենթակա ապրանքի՝ «GNSS ընդունիչ - Geo Tak», տեխնիկական բնութագրի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու իրավաչափությունը, մասնավորապես՝ հայտնելով հետևյալը.

1.ընդունիչի համար սահմանված է ներքին հիշողություն 8GB, որին չեն համապատասխանում աշխարհում առաջատար բրենդների լավագույն ընդունիչները, այդ թվում մեր կողմից ներկայացվող Trimble ընկերության վերջին մոդելի R12i GNSS ընդունիչը, որը համարվում է լավագույններից մեկը այս պահին:

2. ընդունիչի ալիքների քանակը նշված է ոչ պակաս քան 624-ից (նշեմ, որ վերոնշյալ CHCNAV - i90 մոդելի ընդունիչի ալիքների քանակը հենց 624 է) և ոչ 400-ից 650:

Բողոքի քննության շրջանակներում Պատվիրատուն մասնավորապես ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Տպավորություն է ստեղծվում, որ, քանի որ Հրավերի տեխնիկական բնութագրերով չեն սահմանվել «Ռեկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվող Trimble ընկերության վերջին մոդելի R12i GNSS ընդունիչին ներկայացվող պարամետրերը /պահանջները/, ապա սահմանված պարամետրերը /պահանջները/ խտրական են և սահմանվել են ինչ-որ կոնկրետ մոդելի համար»:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Տեխնիկական բնութագրով սահմանված հետևյալ երկու պահանջները, այն է՝ «Ներքին հիշողություն՝ **ոչ պակաս քան 8GB**» և «Ալիքների քանակը՝ **624 կամ ավել**», արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերով սահմանված սույն պահանջները չեն կարող դիտարկվել որպես խտրական, քանի որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չեն սահմանվել կոնկրետ պարամետրեր, ավելին՝ սահմանվել են **«ոչ պակաս քան 8GB»** և **«624 կամ ավել», որը հնարավորություն է տալիս գնման ընթացակարգի մասնակիցներին ներկայացնելու սահմանված պարամետրերից փարբերվող պարամետրեր՝ պահպանելով նվազագույն շեմը**, ուստի գտնում եմ, որ Տեխնիկական բնութագիրը նշված պահանջների մասերով կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան և չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված՝ տեխնիկական բնութագրի կազմմանը ներկայացվող պահանջներին:

Անդրադառնալով բողոքաբերի կողմից բողոքով վիճարկվող և Տեխնիկական բնութագրով սահմանված հետևյալ պահանջին՝ «Տվյալներ ֆորմատներ՝ RTCM 2.x, RTCM 3.x, CMR input / output HCN, HRC, RINEX 2.11, 3.02 NMEA 0183 output կամ ավել», սույն մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գնման առարկայի **բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող** ապրանքի, **աշխատանքի կամ ծառայության հատկանիշները**:

Նույն հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ **գնման առարկայի հատկանիշները** կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ)

նկարագրեր, որոնք **պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին** և պատվիրատուին **ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան**:

Այսպիսով՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանն ուղղված պարտադիր պահանջների վերլուծությունը ցույց է տալիս, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Միաժամանակ պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Ուսումնասիրելով բողոքով վիճարկվող մասով Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագրով սահմանված գնման առարկայի հետևյալ պահանջը. «Տվյալներ ֆորմատներ՝ RTCM 2.x, RTCM 3.x, CMR input / output HCN, HRC, RINEX 2.11, 3.02 NMEA 0183 output կամ ավել»՝ գտնում եմ, որ Պատվիրատուն, սահմանելով գնման առարկայի նման պահանջ՝ առանց հստակ նշելու ֆորմատների միաժամանակյա առկայությունը պարտադիր պահանջ է, թե միայն նշված ֆորմատներից որոշների և այլ ֆորմատների առկայությունը բավարար է, առաջացրել է տարակերպ մեկնաբանության հնարավորություն, որն իր հերթին հանգեցրել է Օրենքի վերոհիշյալ նորմերով սահմանված տեխնիկական բնութագրի կազմմանը ներկայացվող պահանջների խախտման, ուստի գտնում եմ, որ սույն մասով բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է Պատվիրատու կողմից դիրքորոշմամբ հայտնած այն պնդմանը, որ «Ռեկոն» ՍՊԸ-ն բողոքը ներկայացրել է Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ նման պնդումը չի համապատասխանում իրականությանը հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Այսպիսով՝ «ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար համակարգչային և տեսաձայնագրող տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՊՀ-ԳՀԱՊԶԲ-21/138» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտերի բացումը տեղի կունենա 29.06.2021թ. ժամը 11:00-ին, մինչդեռ համաձայն ՀՀ

Ֆինանսների նախարարության փաստաթղթերի էլեկտրոնայի գրանցամատյան մուտքագրման ստացականի՝ «Ռեկոն» ՍՊԸ-ի կողմից բողոքը ներկայացվել է 28.06.2021թ. ժամը 09:35-ին, այսինքն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ռեկոն» ՍՊԸ-ի կողմից 28.06.2021թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու Ընթացակարգը 39-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված  
բողոքներ քննող անձ՝**



**ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**